ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Տարիների մանկավարժական փորձը Ստ. Լիսիցյանին մշտապես հուշում էր նոր դասագրքեր կազմելու անհրաժեշտության մասին՝ հատկապես տարրական դասարանների համար: Նույն խնդրով մտահոգված էր նաև Հովհ. Թումանյանը: Նա հաճախ էր մամուլում հանդես գալիս դասագրքեր կազմելու, իր երկերը դասագրքերում աղավաղելու, նաև այլ կարգի թերությունների հարցերով:

Եվ ահա 1907 թ. Անդրկովկասյան ուսումնական հոգաբարձության թույլտվությամբ մեկնարկվում է «Լուսաբեր» դասագրքի հրատարակումը՝ Ստ. Լիսիցյան, Հովհ. Թումանյան, Լ. Շանթ և Վրթ. Ախիկյան խմբագրական կազմով:





***

Խոսքը նրա վրա է, թե ինչու են դասագրքերը բարեփոխվում.... թե մի հայոց լեզվի դասատու ինչեր կարող է ասել հայոց լեզվի դասագրքի և նրա բարեփոխության մասին։ Պարոն Շահան-Սիմոնը դեմ է դասագրքի բարեփոխությանը։ Ասում է՝ բարեփոխելու դեպքում աշակերտը ստիպված պետք է լինի ձեռքի հինը թողնի, նոր տպագրությունն առնի, իսկ եթե չառնի, ուսուցչին դժվարություն կպատճառի խմբական ընթերցանության ժամանակ։ Եվ մի կարճ միջոց է առաջարկում, խորհուրդ է տալիս էն տեսակ դասագիրք հորինել, որ ապագայում էլ ստիպված չլինեն բարեփոխելու։

Դուք տեսնում եք, որ պարոն դասատուն իր առարկայի դասագրքի բովանդակությունից չի առաջ գալի, ներքին արժանիքի խնդիրը չի դնում, այլ արտաքին անհարմարություններից է վրդովվում։

Էսպես սով, եթե աշակերտը նոր բարեփոխած դասագիրք առնի, մեղք է, իսկ, եթե վատ նյութը կամ սխալը մնա ձեռքին, էդ ոչինչ…

Ասում եք՝ միանգամից էնպես կատարյալ դասագիրք հորինեցեք, որ էլ բարեփոխելու կարիք չլինի… Միանգա՛մից իսկի աստված էլ չկարողացավ էնպես բա՛ն ստեղծի, որ էլ բարեփոխելու կարիք չլինի։

Հովհ. Թումանյան

«Դասագրքերի բարեփոխման խնդիրը», 1913

***

Դաժան վիճակն ու երկարատև խավարը դարերի ընթացքում շատ ախտ ու կեղտ են կուտակել մեր կյանքի ու հոգու վրա, բայց մենք կուլտուրաներ ունեցած ու ապրած ժողովուրդ ենք, հեշտ կարող ենք թոթափել մեզնից էդ ամենը և նորից կանգնել մաքուր, առողջ ու բարձր։ Էդհրաշքը կարող ենք կատարել միայն դպրոցի ու գրականության միջոցով, իսկ դպրոցն ու գրականությունը անբաժանելի հասկացողություն են։

Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը դպրոցի բովանդակությունը, երկուսը միացած են պայծառ ու լուսավոր ուժով, որով հզոր ու անխորտակելիեն դառնում ժողովուրդները ու մտնում են կուլտուրական ազգերի եղբայրության մեջ։

Հովհ. Թումանյան

«Դպրոց և գրականություն», 1913

***

…ի՞նչ կնշանակի դպրոց ու գրականություն։ Դպրոց՝ կնշանակի ուսուցիչ, գրականություն՝ կնշանակի գրող։ Եվ ուժեղ դպրոց ու գրականություն ունենալ, կնշանակի ուժեղ ուսուցիչ ու գրող ունենալ։
Էս է պարզը։ Եվ էսպես են հասկացել էն ազգերը, որոնք կարճ ժամանակում մեծ հառաջադիմություն են արել, և սրա մեջն է նրանց արագ, գրեթե հանկարծակի ուժեղանալու գաղտնիքը։

Հովհ. Թումանյան

«Մեծ տոնը և հայ ուսուցիչն ու գրողը», 1913

***

… եթե դպրոցը ուսուցիչն է, ապա պետք է արժանին մատուցել նրան, պետք է լուծել հայ ուսուցչի ապահովության խնդիրը, այլապես ոչ միայն նա կփախչի դպրոցից, այլև կփախցնի իր զավակներին՝ տալով օտար դպրոցներ, որ նրանք զերծ լինեն «Ազգային մշակույթի անդաստանում աշխատողների չարքաշ կյանքից։

Հովհ. Թումանյան

«Մեծ տոնը և հայ ուսուցիչն ու գրողը», 1913

***

Ամեն երևույթ ունի իր արտաքին կերպարանքը – ձևը և ներքին իմաստը – հոգին: Ապրողը, գեղեցիկը, կատարյալը դրանց ներդաշնակությունն է, բայց էդ ներդաշնակությունը, դժբախտաբար, շատ է դժար, և մարդիկ սովորաբար վազում են հեշտին, իսկ հեշտը ձևն է: Երբ չեն կարողանում ըմբռնել մի որևէ բանի ներքին իմաստը, հոգին, կամ թե չէ կորցնում են ժամանակի ընթացքում, պաշտում ու պաշտպանում են ձևը, առանց հասկանալու: Եվ հաճախ մեծ գաղափարների անուններով լոկ ձևեր են պաշտում...
Ուսումնարան ասելով ավելի շուտ շենքն են հասկանում, քան թե ուսուցիչ ու աշակերտ: Եվ էդ հասկացողությունն է խոր պատճառը, որ ուսուցիչը մեզանում էնքան հաճախ ու հեշտ ենթարկվում է զրկանքի, հալածանքի ու արհամարհանքի: Ուսումնարանի գաղափարը նրա հետ չի կապված, այլ շենքի:

Հովի. Թումանյան

«Ձևն ու հոգին», 1910 թ.

***

Հերիք էր ինչքան տանջվեց ու տառապեց հայ ուսուցիչը, հերիք էր ինչքան տուժեց սովորող սերունդը, հերիք էր, ինչքան ալեկոծվեց ու կարգ պահանջեց հասարակությունը:

Հովի. Թումանյան

«Ընդհանուր ուսուցչական խնդիր», 1910

***

...էն մեծ ժառանգությունն արդեն, որ մեր ազգային կյանքում մեզ, հետևորդներիս, թողել են մեր պանծալի նախորդները՝ Սահակն ու Մեսրոպը, Եղիշեն ու Շնորհալին, Փարպեցին ու Նարեկացին, Նահապետ Քուչակն ու Սայաթ-Նովան, Աբովյանն ու Նալբանդյանը, Արծրունին ու Ռաֆֆին, Աղայանն ու Պռոշյանը, Սունդուկյան ու Ալիշանը ու շատ իրենց նմանները, որոնք իրենց հոյակապ գործերով լցրին մեր երկիրը և իրենց հիշատակներով մեր սրտերը ու ինչպես պայծառ արևներ լուսավորում են մեր ճանապարհը դեպի ապագա լավ օրերը, և որոնց ապավինած մենք զգում ենք մեզ հզոր ու անսասան, ասում եմ՝ նրանց մեզ թողած ժառանգությունն արդեն նյութական հարստություն չի, այլ բարոյական, հոգեղեն, մտավոր, խոսքի ու բանի կարողություն...

Հովի. Թումանյան

Խոսք հայ գրողների ընկերության առաջին երեկույթին» 1912

***

Մանկական գրականության հարուստ գոհարներին զուգահեռ 1915 թ. Հովհ. Թումանյանը կազմում և հրապարկում է մոտ մեկ տասնյակի հասնող զարգացնող խաղեր: «*Նկատելով, որ մեր աշխարհքից, մեր հայրենիքից կատարելապես անգետ ու նտեղյակ ենք առհասարակ թե մեծերս, թե փոքրերը, երբ մեր երեխեքը խորթանում են ավելի ևս ամեն հայկականից, մտածեցի ձեռնարկել, կազմել ու հրատարակել մի շարք հայրենագիտական և այլ տեսակի խաղեր, թե երեխաների, թե պատանիների և թե նույնիսկ մեծերի համար*»:

Հովհ. Թումանյան

«Ազդ», 1915

***

Մանկությունը մարդու կյանքի էն ամենաընդունակ շրջանն է, երբ չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ: Հետևաբար՝ շարունակ էլ պետք է սնունդ տալ նրան, որ միշտ աճի ու զարգանա: Եվ ահա հենց էստեղ էլ հարց է առաջ գալիս՝ ի՞նչ սնունդ տալ, և ի՞նչ ձևով տալ:

Ինչ վերաբերում է սնունդին, ամեն բան, ինչ որ շրջապատում է նրան, ինչ որ գոյություն ունի աշխարհքում, սնունդ է նրա համար: Միայն թե պետք է իմանալ, գտնել էս անսպառ սնունդ տալու ձևը:

Եվ մինչդեռ մենք նստած խորը մտածում ենք էս դժար հանելուկի վրա, ինքը, մանուկ հասակը, ցույց է տալիս էն հրաշալի ձևը ու ամեն տեսակի սնունդ էլ պահանջում է իր ուզած ձևով՝ խաղով:

Խաղը նրա, մանուկ մարդու, բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Խաղում է նրա մատաղ կյանքի ամեն մի մասնիկը, խաղում է նրա թրթռուն սիրտը ջահել կրծքի մեջ, ու կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, խաղով է քննում, խաղով է ճանաչում ու ընդունում: Դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան , ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է , հեշտ էլ յուրացնում, առանց ձանձրանալու, առանց հոգնելու:

Հովհ. Թումանյան

«Ազդ», 1915

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐԻ ԼՈՏՈ

Հեղ.՝ Հովհաննես Թումանյան


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՄԱՆԱԿ" ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ № 8
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐԻ
ԼՕՏՕ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ՄԱՆԱԿ" ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ № 8
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐԻ
ԼՕՏՕ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿԱԶՄԱԾ
ԶՎԱՐՃԱԼԻ
ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ
ԽԱՂԵՐԸ
«ՍՐԲԱՄԻՏ
ՀՈՎԻՎԸ»
«ՀԱՅԿԱԿԱՆ
ԱՌԱՋՆԵՐԻ
ԼՈՏՈ»
«ՀԱՅՈՑ
ԳԵՏԵՐԸ»

ՍՐԲԱՄԻՏ ՀՈՎԻՎԸ
ՏԱՌԱՐԻ ԽԱՂ

ԱՍՏԼԵՐԻ ԽԱՂԸ

ՍՐԲԱՄԻՏ ՀՈՎԻՎԸ
ՏԱՌԱՐԻ ԽԱՂ

Հովի. Թումանյանի կողմից ուսումնասիրված այլ լեզվով գրականություն

Նյութը տրամադրել է Հովհաննես Թումանյանի թանգարանը: